

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արյոյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը և Արման Ափիհյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

*Սեյրան Աղաբեկյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

*Արկաղի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Տիգրան Նազարյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ *Քրիստր Մարտիկյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կողայանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արմեն Մափիհյանը, Վահագն Ավագյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

*Սուրեն Կարապետյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

*Արևիկ Լոթյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամ՝

*Հասմիկ Խլոպուզյանը*

Նիստին ներկա էր նաև նախաձեռնող խմբի ներկայացուցիչ *Գևորգ Քոթանջյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստին ներկա էին նաև տնակային ավաններում բնակվող ընտանիքների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.15-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2018 թվականի 3-րդ նստաշրջանի երկրորդ ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է <https://www.youtube.com/watch?v=uWkeFWj1hQ> հղումով )

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

**Կողմ՝ 27, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր :**

Հաստատվեց օրակարգը՝

1. Տնակների բնակիչներին սեփականության իրավունքով հողատարածքի հատկացման վերաբերյալ  
զեկ.՝ Գևորգ Քոթանջյան (նախսաձեռնող խումբ)
2. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 2-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին  
զեկ.՝ Ա.Օհանյան
3. Վանաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին  
զեկ.՝ Ա.Օհանյան
4. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 7-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին  
զեկ.՝ Ա.Օհանյան
5. Վանաձոր համայնքի 2018-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին  
զեկ.՝ Ն.Մամուլյան
6. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին  
զեկ.՝ Վ.Գրիգորյան
7. Վանաձոր համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների կազմը և անդամների քանակը հաստատելու մասին  
զեկ.՝ Ա.Հովհաննիսյան
8. Վանաձոր համայնքի ղեկավարին կից, Վանաձոր համայնքի տարածքում հասարակական կարգով գործող թվով 3 (երեք) խորհրդակցական մարմինների կազմերը հաստատելու մասին  
զեկ.՝ Ա.Հովհաննիսյան
9. Վանաձոր համայնքի ավագանու 21 հունիսի 2017 թվականի թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին  
զեկ.՝ Գ.Բաղյան
10. Վանաձոր համայնքի ավագանու 11 դեկտեմբերի 2017թվականի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 104-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին  
զեկ.՝ Գ.Մացակյան

11. Վանաձորի համայնքի ավագանու 2008 թվականի մարտի 21-ի թիվ 8 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2008 թվականի ապրիլի 02-ի թիվ 213 պայմանագիրը լուծելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

12. Վանաձոր համայնքի «Վանաձորի Գր.Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժողովրդական համույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

13. Վանաձոր համայնքի ավագանու 2008 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 146 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2015 թվականի հունվարի 12-ի տրանսպորտային միջոցի վարձակալության թիվ 3 պայմանագիրը 2017 թվականի հունիսի 01-ի դրությամբ լուծելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

14. Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալության հանձնելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

15. «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

16. Վազգեն Արշակի Բաղայանին Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 47/1-3 հասցեում գտնվող արվեստանոցը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

17. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

18. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

19. Արման Անդրանիկի Ալեքսանյանին, Անդրանիկ Արմանի Ալեքսանյանին, Արթուր Արմանի Ալեքսանյանին և Նաիրա Քյարամի Պողոսյանին Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 57/16 հասցեում գտնվող՝ Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (բնակելի տունը, իր զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը) օտարելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

20. Զորիկ Ժիրայրի Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

21. Ռաֆիկ Կոմիտասի Բոշյանի հիշատակը հավերժացնող անվանատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին

22. Վանաձոր համայնքի Վարդանանց փողոցով, տիկնիկային թատրոնով և Հ.Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի տարածքով սահմանափակված կանաչ գոտին անվանակոչելու մասին

զեկ.՝ Ս.Արուսյան և Գ.Բաղյան

23. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - Տնակների բնակիչներին սեփականության իրավունքով հողատարածքի հատկացման վերաբերյալ:

- Զեկուցեց նախաձեռնող խմբի ներկայացուցիչ Գևորգ Քոթանջյանը:

Նիստը վարող համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանը նախ շնորհակալություն հայտնեց նախաձեռնող խմբի անդամներին կատարված աշխատանքի համար և հարկ համարեց մի քանի պարզաբանումներ տալ ավագանու անդամների և նիստին ներկա բնակիչների համար, ըստ նախաձեռնող խմբի ներկայացրած որոշման նախագծի կետերի՝

**Բուլղարական տնակային ավանի և մնացյալ տնակային տարածքների առումով**

Մամիկոն Ասլանյանը նշեց, որ Վանաձորի տնակային ավաններում չկա որևէ ընտանիք, որը 1988 թվականին կորցրել է բնակարան և հետագայում չի ստացել կամ բնակարան, կամ էլ բնակարանի գնման սերտիֆիկատ: Հետևաբար, խնդիրը վերաբերում է միայն նրանց, ովքեր տարբեր պատճառներով չեն կարողացել իրենց բնակարանային հարցերը լուծել: Բացի այդ, գործող օրենսդրությունը տնակներում բնակվող ընտանիքներին առաջնահերթություն է տալիս ընտանեկան նպաստներ ստանալու հարցում: Պետք է նաև հաշվի առնել, որ Վանաձոր համայնքի գլխավոր հատակագծով տնակային ավանների տարածքներում, ելնելով սեսմակայունության և այլ չափորոշիչներից, կառուցապատման ենթակա չեն և այնտեղ պլանավորված են հիմնականում այգիներ և զբոսայգիներ:

Բուլղարական ավանի տարածքը պետական սեփականություն է և անհրաժեշտ է կառավարության որոշումը, որպեսզի այն հանձնվի համայնքին որպես սեփականություն: Ինչպես պարզել է համայնքապետարանի ուսումնասիրությունը, ինչպես նաև համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության ժամանակ տնակային ավանների բնակիչների հետ հանդիպումներից, Բուլղարական տնակային ավանի, ինչպես նաև այլ տնակային ավանների բնակիչների մի սովոր հատված դեմ է, որ իրենց սեփականության իրավունքով տրվի հողատարածք, քանի որ այդ դեպքում կզրկվեն նպաստից և այլ սոցիալական աջակցությունից, ինչպես նաև համայնքի և պետության առջև անօթևան հաշվառվելու հնարավորությունից:

Մյուս հատվածի առումով համայնքի ղեկավարն առաջարկվեց դիմել համայնքապետարան և հավաստել, որ տնակի բնակիչն ի վիճակի է տուն կառուցել և ունի այդ հնարավորությունը, որպեսզի հաշվարկվի, թե քանի ընտանիք է պատրաստ նման ձևով լուծել իր բնակարանի հարցը:

**Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանների տրամադրման առումով՝**

Տեղեկացվեց, որ համայնքի սեփականություն են հանդիսանում 3-րդ կարգի վթարայնության բազմաբնակարան շենքերի 688 բնակարաններ, որոնցից միայն 131-ն են թալանված և չբնակեցված: Համայնքի ղեկավարի հավաստմամբ, համայնքապետարանը պատրաստ է այդ բնակարանները անհատույց հատկացնել տնակային ավանների բնակիչներին, եթե նրանք պարտավորվեն սեփական

միջոցներով իրականացնել վերանորոգում և ապահովել նվազագույն կենցաղային պայմաններ այդ բնակարաններում ապրելու նպատակով: Առայժմ ցանկացողներ չկան:

Մնացյալ համայնքային սեփականություն հանդիսացող 557 բնակարանները տիրազուրկ չեն, ունեն նախկին ձևաչափով օրդերներ, պարզապես ժամանակին անհատույց չեն սեփականաշնորհել և աստիճանաբար դիմում են սեփականաշնորհելու նպատակով: Այս հարցում նախաձեռնող խումբը որոշակի թյուրիմանցության մեջ է գցել բնակիչներին, ներկայացնելով, որ համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր բնակարանները տիրազուրկ են և կարող են այդ քանակով հատկացվել բնակիչներին:

Համյանքի ղեկավարի պարզաբանումից հետո զեկուցողը պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Որոշման նախագծի վերաբերյալ առաջարկությամբ հանդես եկան՝

ՀՀԿ խմբակցության անդամ Մարինե Հովհաննիսյանը, ով շնորհակալություն հայտնելով նախաձեռնող խմբին, ընդունելի համարեց միայն որոշման նախագծի 5-րդ կետը, առաջարկելով ստեղծել հանձնաժողով որոշման նախագծի բոլոր կետերի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

ԲՀԿ խմբակցության անդամ Այծեմնիկ Օհանյանը, ով նույնպես շնորհակալություն հայտնելով նախաձեռնող խմբի անդամներին, առաջարկեց ստեղծել հանձնաժողով, որը մասնագիտական փորձառությամբ կուսումնասիրի խնդիրը և առաջարկությունները կներկայացնի ավագանուն:

ԼՀԿ խմբակցության ղեկավար Քրիստ Մարուքյանը նույնպես բարձր գնահատեց նախաձեռնող խմբի աշխատանքը և ճիշտ համարեց համապատասխան հանձնաժողովի ձևավորումը, որտեղ ընդգրկված կլինեն նաև նախաձեռնող խմբի անդամները:

Նիստը վարողն առաջարկեց քվերակել նախաձեռնող խմբի առաջարկած օրակարգային նախագիծը:

**Քվեարկությամբ, դեմ՝ 28, որոշում չընդունվեց:**

Նիստը վարողը, հաշվի առնելով, որ խմբակցությունների ներկայացուցիչների առաջարկությունները բովանդակային առումով համահունչ են, առաջարկեց քվեարկել օրակարգի 2-րդ հարցը հետևյալ նոր բովանդակությամբ՝

«1.Վանաձոր համայնքի տարածքում գտնվող տնակային ավանների հիմնախնդիրները ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ կազմված Վանաձոր համայնքի ղեկավարից, համայնքի ղեկավարի առաջին տեղակալից, աշխատակազմի աշխատակիցներից, խմբակցությունների, հասարակական կազմակերպությունների և նախաձեռնող խմբի անդամներից:

2. Հանձնաժողովի կազմի ձևավորումը վերապահել համայնքի ղեկավարին»:

**Քվեարկությամբ, կողմ՝ 28, ընդունվեց որոշում:**

2. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 2-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը :

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:**

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը: Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:**

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 7-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արթուր Օհանյանը: Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:**

5. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2018-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Նելսոն Մամուլյանը:

Որոշման նախագիծը ներկայացվեց նաև տեսանյութով:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում:**

6. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18, դեմ՝ 6, ընդունվեց որոշում:**

7. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների կազմը և անդամների քանակը հաստատելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

8. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ղեկավարին կից, Վանաձոր համայնքի տարածքում հասարակական կարգով գործող թվով 3 (երեք) խորհրդակցական մարմինների կազմերը հաստատելու մասին:

:

-Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի պետ Արևհատ Հովհաննիսյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:**

9. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 21 հունիսի 2017 թվականի թիվ 50-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

-Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:**

10. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 11 դեկտեմբերի 2017թվականի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 104-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

-Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի աշխատակազմի Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գ. Մացակյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, դեմ՝ 5, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում:**

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքի ավագանու 2008 թվականի մարտի 21-ի թիվ 8 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2008 թվականի ապրիլի 02-ի թիվ 213 պայմանագիրը լուծելու մասին:

- Ձեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ. Դավիթավյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

12. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի «Վանաձորի Գր.Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժողովրդական համույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ. Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Ամփոփելով քննարկումները նիստը վարողն առաջարկեց որոշման նախագծի մեջ ավելացնել լրացուցիչ 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «Թույլատրել «Վանաձորի Գր.Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժողովրդական համույթ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ տարածքները հանձնել անհատույց օգտագործման: Տարածքներն անհատույց օգտագործման հանձնելու դեպքում՝ համաձայնեցնել Վանաձոր համայնքի ղեկավարի հետ»:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը՝ բոլոր հինգ կետերով հանդերձ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 22, ձեռնպահ՝ 3, ընդունվեց որոշում:**

13. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2008 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 146 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2015 թվականի հունվարի 12-ի տրանսպորտային միջոցի վարձակալության թիվ 3 պայմանագիրը 2017 թվականի հունիսի 01-ի դրությամբ լուծելու մասին:

-Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ.Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Զեկուցողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության հետևյալ բովանդակային փոփոխությամբ՝ «Վանաձոր համայնքի ավագանու 2008 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 146 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2015 թվականի հունվարի 12-ի տրանսպորտային միջոցի վարձակալության թիվ 3 պայմանագիրը»:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ՝ 23 կողմ, ընդունվեց որոշում:**

14. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալության հանձնելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ.Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 23, ընդունվեց որոշում:**

15. ԼՍԵՑԻՆ - «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:



--Ձեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ. Դավիթավյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Ավագանու անդամ Խորեն Վարդանյանն առաջարկեց հարցին անդրադառնալ ընթացիկ չորրորդ եռամսյակում, երբ հաշվելի կլինի կազմակերպության կողմից համայնքապետարանի կառույցներին մատուցած ծառայության չափը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 2, դեմ՝ 14, ձեռնպահ՝ 2, որոշում չընդունվեց:**

16. ԼՍԵՑԻՆ - Վազգեն Արշակի Բաղայանին Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 47/1-3 հասցեում գտնվող արվեստանոցը նվիրատվությամբ հանձնելուն համաձայնություն տալու մասին:

--Ձեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի պետ Վ.Դավիթավյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Քննարկումների ընթացքում ավագանու անդամներ Կարեն Դավթյանը և Դավիթ Հակոբյանն առաջարկեցին նոր որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ՝ «Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 47/1-3 հասցեում գտնվող արվեստանոցը Վազգեն Բաղայանին անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու մասին» որոշման նախագիծ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել զեկուցողի կողմից ներկայացված որոշման նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 6, դեմ՝ 10, ձեռնպահ՝ 1, որոշում չընդունվեց:**

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել Կարեն Դավթյանի և Դավիթ Հակոբյանի առաջարկած որոշման նախագիծը՝ «Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի թիվ 47/1-3 հասցեում գտնվող արվեստանոցը Վազգեն Բաղայանին անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու մասին»:

**Քվեարկությամբ, կողմ՝ 22, ընդունվեց որոշում:**

17. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին:

--Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Ձեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրին լրացուցիչ պարզաբանումները:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

18. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին:

--Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

19. ԼՍԵՑԻՆ - Արման Անդրանիկի Ալեքսանյանին, Անդրանիկ Արմանի Ալեքսանյանին, Արթուր Արմանի Ալեքսանյանին և Նաիրա Քյարամի Պողոսյանին Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 57/16 հասցեում գտնվող՝ Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը (բնակելի տունը, իր զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը) օտարելու մասին:

--Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

20. ԼՍԵՑԻՆ - Զորիկ Ժիրայրի Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

--Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

21. ԼՍԵՑԻՆ - Ռաֆիկ Կոմիտասի Բոշյանի հիշատակը հավերժացնող անվանատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

--Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

22. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Վարդանանց փողոցով, տիկնիկային թատրոնով և Հ.Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի տարածքով սահմանափակված կանաչ գոտին անվանակոչելու մասին:

-- Ձեկուցեցին համայնքապետարանի աշխատակազմի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը և Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Ամփոփելով քննարկումները, նիստը վարողն առաջարկեց բովանդակային փոփոխություն կատարել որոշման նախագծի մեջ և որոշման առաջին կետի «Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի պուրակ» բառերը փոխարինել «Հանրապետության պուրակ» բառերով:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը առաջարկված բովանդակային փոփոխությամբ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:**

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում:**

20. ԼՍԵՑԻՆ - Ջորիկ Ժիրայրի Գևորգյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

–Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

21. ԼՍԵՑԻՆ - Ռաֆիկ Կոմիտասի Բոշյանի հիշատակը հավերժացնող անվանատախտակի տեղադրմանը համաձայնություն տալու մասին:

–Ձեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, ընդունվեց որոշում:**

22. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի Վարդանանց փողոցով, տիկնիկային թատրոնով և Հ.Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղի տարածքով սահմանափակված կանաչ գոտին անվանակոչելու մասին:

– Ձեկուցեցին համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը և Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Ամփոփելով քննարկումները, նիստը վարողն առաջարկեց բովանդակային փոփոխություն կատարել որոշման նախագծի մեջ և որոշման առաջին կետի «Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի պուրակ» բառերը փոխարինել «Հանրապետության պուրակ» բառերով:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը առաջարկված բովանդակային փոփոխությամբ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, ընդունվեց որոշում:**

23. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի ապրիլի 30-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19 , ընդունվեց որոշում:**

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի ապրիլի 30-ը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց

11



Է. Հովսեփյանը